ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՔԱՂՑՐԱՀԱՄ ՋՐԵՐ

Միջավայրի պայմանների և մարդու առողջության վրա բացասաբար ազդող ֆիզիկական, քիմիական և կենսաբանական աղտոտիչների թափանցումը, առաջացումն ու կուտակումը բնական ջրերում կոչվում է ջրի աղտոտում: Ջրի աղտոտման աղբյուրները հետևյալն են.

- կենցաղային հոսքաջրերը,
- արդյունաբերական հոսքաջրերը,
- ձնհալի և անձրևների ժամանակ հողահանդակներից տեղափոխված պեստիցիդները,
- բնակավայրերից վնասակար նյութերը,
- անձրևի և ձյան միջոցով՝ մթնոլորտից անջատվող աղտոտող նյութերը:

Աղտոտման աղբյուրները կարող են լինել ինչպես կետային, այնպես էլ ցրված: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում աղտոտված են լինում կենսածին նյութերով, արդյունաբերական հոսքաջրերը՝ առավել հաճախ նավթամթերքներով, ֆենոլներով, ծանր մետաղներով (կապար, կադմիում, պղինձ, ցինկ և այլն) և բարդ օրգանական միացություններով (սինթետիկ լվացամիջոցներ, ներկեր, ճարպեր), որոնք վատթարացնում են ջրի որակը, խմելու և սննդի մեջ օգտագործելու համար դարձնում ոչ պիտանի, խախտվում են ջրային ավազանի կենսաբանական շարժընթացները, նվազում է աղտոտող նյութերից ջրի ինքնամաքրման հատկությունը, փոխվում է ջրային կենսաբազմազանության կազմն ու սննդային արժեքը: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում պարունակում են աղիքային վարակիչ հիվանդությունների հարուցիչներ:

Մակերևութային ջրեր

2021 թվականի 2-րդ եռամսյակում մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի դիտարկումներ իրականացվել են 91 հիդրոլոգիական դիտակետերում, այդ թվում՝ 82 գետային, 5 ջրամբարային (Արփի լիճ, Ախուրյան, Մարմարիկ, Ապարան, Ազատ) և 4 լճային (Սևանա լճում): Դիտակետերում իրականացվում են ամենօրյա դիտարկումներ մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ (ջրի մակարդակ, ջրի և օդի ջերմաստիճան, սառցային երևույթներ, ջրի ելքի չափումներ): 54 օպերատիվ դիտակետերից ամենօրյա ռեժիմով տվյալներ են ստացվել մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ, այդ տվյալների հիման վրա կազմվել են հիդրոլոգիական տեղեկագրեր և տրամադրվել պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին և այլ շահառուների:

2021 թվականի 2-րդ եռամսյակում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է հանրապետության 41 գետի, Արփի լիճ, Ախուրյանի, Ապարանի, Երևանյան լիճ, Ազատի և Կեչուտի ջրամբարների, Արփա-Սևան և Որոտան-Արփա ջրատարների և Սևանա լճի 14 դիտակետում: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ): Ջրի որակի գնահատումը կատարվել է համաձայն ՀՀ կառավարության 2011թ. հուլիսի 27-ի N75-Ն որոշման: Մակերևութային ջրերի որոշ փորձանմուշներում որոշվել են նաև օրգանական միացությունների պարունակությունները:

Իրականացված դիտարկումների արդյունքները ներկայացված են Աղյուսակ 6-15-ում և Հավելված 3-ում:

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Հիդրոլոգիական դիտարկումներ

Հյուսիսային ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 21 դիտակետում: Որոշ օպերատիվ հիդրոլոգիական դիտակետերի ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաներերի նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 1. Հյուսիսային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		ապրիլ			մայիս			հունիս		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Փամբակ	Վանաձոր	11.0	13.7	81	7.39	15.5	48	3.00	9.05	33
Դեբեդ	Այրում	78.8	69.9	113	61.8	82.7	75	19.8	60.7	33
Ձորագետ	Գարգառ	29.9	28.4	105	24.6	36.7	67	10.2	28.2	36
Աղստև	Իջևան	25.6	26.6	96	15.7	27.9	56	5.33	16.5	32
Գետիկ	Գոշ	16.0	10.8	147	9.31	10.6	87	2.23	5.47	41

Մակերևութային ջրերի որակ

Հյուսիսային ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 22 դիտակետում:

Փամբակ գետի ջրի որակը Խնկոյան գյուղից վերև երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Սպիտակ քաղաքից ներքև երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Վանաձոր քաղաքից վերև երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վանաձոր քաղաքից ներքև ապրիլ և մայիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «վատ» (5-րդ դաս):

Դեբեդ գետի ջրի որակը Մարց գետի թափման կետից ներքև հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Այրում քաղաքից վերև երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Սահմանի մոտ հատվածում ապրիլ և հունիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիսին՝ «միջակ» (3-րդ դաս):

Ձորագետ գետի ջրի որակը Ստեփանավանից վերև հատվածում ապրիլ և մայիս ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում ապրիլ և հունիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Տաշիր գետի ջրի որակը Միխայելովկայից վերև ապրիլ և մայիս ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Սարատովկայից ներքև հատվածում ջրի որակը ապրիլ և հունիս ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Մարց գետի ջրի որակը գետաբերանի հատվածում ապրիլ և մայիս ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «լավ» (2-րդ դաս):

Ախթալա գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գարգառ գետի ջրի որակը ակունքում ապրիլ և հունիս ամիսներին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը ապրիլին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «վատ» (5-րդ դաս):

Շնող գետի ջրի որակը գետաբերանի հատվածում ապրիլ և մայիս ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «վատ» (5-րդ դաս):

Աղստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև և Դիլիջան քաղաքից ներքև հատվածներում մայիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Իջևան քաղաքից վերև և Իջևան քաղաքից ներքև հատվածներում ջրի որակը մայիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Գետիկ գետի ջրի որակը Վահան գյուղից վերև և գետաբերանի հատվածներում մայիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):






Մոլիբդեն
Դեբեդ գետ
Կոնց. (մգ/լ)
0.004
0.003
0.003
0.002
0.002
0.001
0.001
0.000
Ապրիլ
Մայիս
Հունիս
Նորմ (2-րդ դաս)
№5 0.5կմ Մարց գետի թափ. կետից ներքև
№6 Դեբեդ գետի ք. Այրումից վերև
№7 Դեբեդ գետի Սահմանի մոտ
Դիտակետ


Պղինձ
Ախթալա գետ, գետաբերան
Կոնց. (մգ/լ)
3.0
2.5
2.0
1.5
1.0
0.5
0.0
2020
2021
Նորմ (2-րդ դաս)
I
II
III
IV
V
VI
VII
VIII
IX
X
XI
Ամիսներ


Մոլիբդեն
Ախթալա գետ, գետաբերան
Կոնց. (մգ/լ)
0.010
0.008
0.006
0.004
0.002
0.000
2020
2021
Նորմ (2-րդ դաս)
I
II
III
IV
V
VI
VII
VIII
IX
X
XI
Ամիսներ


Կոնց. (մգ/լ)
Մոլիբդեն
Շեղող գետ, գետաբերան
0.10
0.08
0.06
0.04
0.02
0.00
2020
2021
Նորմ
(2-րդ դաս)
I
II
III
IV
V
VI
VII
VIII
IX
X
XI
Ամիսներ

ՀՀ Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը







ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Քաղաքներ
- Բնակավայրեր

Մակերևութային ջրերի

- Որակի մոնիթորինգի դիտակետեր
- Հիդրոլոգիական դիտակետեր
- Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք

Հիդրոլոգիական դիտարկումներ

Ախուրյանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում, այդ թվում՝ 14 գետային և 2 ջրամբարային: Օպերատիվ դիտակետերից երկուսի ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաներերի նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 2. Ախուրյանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		ապրիլ			մայիս			հունիս		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ախուրյան	Ախուրիկ	9.19	15.7	59	4.15	11.5	36	3.25	6.41	51
Մեծամոր	Մեծամոր	5.79	29.5	20	2.52	20.5	12	2.17	15.2	14

Մակերևութային ջրերի որակ

Ախուրյանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 11 դիտակետում:

Ախուրյան գետի ջրի որակը Ամասիա գյուղից ներքև հատվածում ապրիլ և մայիս ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Գյումրի քաղաքից վերև ջրի որակը ապրիլին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «լավ» (2-րդ դաս), Գյումրի քաղաքից ներքև ջրի որակը ապրիլ և մայիս ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Բագարան գյուղից ներքև ջրի որակը ապրիլին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Աշոցք գետի ջրի որակը Մուսայելյան գյուղից վերև հատվածում մայիսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս):

Կարկաչուն գետի ջրի որակը գետաբերանի հատվածում ապրիլ և մայիս ամիսներին գնահատավել է «վատ» (5-րդ դաս):

Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ հատվածում մայիս ամսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք և Ռանչպար գյուղից ներքև հատվածներում ջրի որակը մայիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):




Կոնց. (մգ/լ)
Ծոսֆատ իոն
Կարկաչուն գետ
8
6
4
2
0
2020
2021
Նորմ (2րդ դաս)
III
IV
V
VI
VII
VIII
IX
X
XI
XII
Ամիսներ

ՀՀ Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը





ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Բնակավայրեր

Մակերևութային ջրերի

- որակի մոնիթորինգի դիտակետեր
- հիդրոլոգիական դիտակետեր
- Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Հիդրոլոգիական դիտարկումներ

Հրազդանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում, այդ թվում՝ 13 գետային, 2 ջրամբարային և մեկ ջրանցքի: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացվում են.

Աղյուսակ 3. Հրազդանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		ապրիլ			մայիս			հունիս		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Հրազդան	Հրազդան	17.6	20.1	88	14.0	28.0	50	5.66	11.9	47
Հրազդան	Արգել	5.73	8.00	71	4.53	7.79	58	2.60	4.43	59
Հրազդան	Երևան	9.46	18.2	52	1.90	11.8	16	1.71	3.65	47
Մարմարիկ	Հանքավան	4.30	4.00	108	3.17	7.66	41	1.14	3.37	34
Մարմարիկ	Աղավնաձոր	12.4	12.1	102	12.3	19.9	62	4.89	9.46	52
Քասախ	Վարդենիս	1.81	3.88	47	0.95	3.37	28	0.27	1.76	15
Քասախ	Աշտարակ	6.05	7.16	85	4.90	3.69	133	2.32	3.39	68

Մակերևութային ջրերի որակ

Հրազդանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 20 դիտակետում:

Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև երեք ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Ապարան քաղաքից ներքև ջրի որակը ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մայիսին՝ «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս), Աշտարակ քաղաքից վերև և ներքև հատվածներում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատավել է «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում ապրիլ ամսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիս և ապրիլ ամիսներին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Գեղարոտ գետի ջրի որակը Արագած գյուղից վերև հատվածում մայիս և հունիս ամիսներին գնահատվել է՝ «անբավարար» (4-րդ դաս): Գետաբերանի հատվածում ապրիլ և մայիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝«միջակ» (3-րդ դաս):

Շաղվարդ գետի ջրի որակը Փարպի գյուղից ներքև հատվածում ապրիլ և մայիս ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝«միջակ» (3-րդ դաս):

Հրազդան գետի ջրի որակը Քաղսի գյուղից ներքև, Արգել գուղից ներքև, Արզնի ՀԷԿ-ից ներքև, Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, Հրազդան գետի գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում մայիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մայիս ամսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև և գետաբերանի հատվածներում մայիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Ծաղկաձոր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև հատվածում մայիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Ծաղկաձոր քաղաքից ներքև հատվածում մայիսին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):


Ամոնիում իոն
Քասախ գետ
Կոնց. (մգN/լ)
4
4
3
3
2
2
1
1
0
Ապրիլ
Մայիս
Հունիս
Նորմ
(2-րդ դաս)
№43 ք. Ապարանից 0.5 կմ վերև
№44 ք. Ապարանից 0.5 կմ ներքև
№45 ք. Աշտարակից 1 կմ վերև
№46 ք. Աշտարակից 3.5 կմ ներքև
№47 գետաբերան
Դիտակետ


Ամոնիում իոն
Հրազդան գետ
Կոնց. (մգN/լ)
50
40
30
20
10
0
Մայիս
Նորմ
(2-րդ դաս)
№52 գյ. Քաղսիից 0.5 կմ ներքև
№53 գյ. Արգելից 0.5 կմ ներքև
№54 Արգնի ՀԷԿ-ից 0.5 կմ ներքև
№55 գյ. Դարբնիկի մոտ
№225 գյ. Գեղանիստի մոտ
№56 գետաբերան
Դիտակետ


Ֆոսֆատ իոն
Հրազդան գետ
Կոնց. (մգ/լ)
8
7
6
5
4
3
2
1
0
Մայիս
Նորմ
(2-րդ դաս)
№52 գյ. Քաղսիից 0.5 կմ ներքև
№53 գյ. Արգելից 0.5 կմ ներքև
№54 Արգնի ՀԷԿ-ից 0.5 կմ ներքև
№55 գյ. Դարբնիկի մոտ
№225 գյ. Գեղանիստի մոտ
№56 գետաբերան
Դիտակետ


Կոնց. (մգN/լ)
Ամոնիում իոն
Գետառ գետ
30
25
20
15
10
5
0
2020
2021
Նորմ (2-րդ դաս)
I
II
III
IV
V
VI
VII
IX
X
XI
XII
Ամիսներ


Կոնց. (մգN/լ)
Նիտրիտ իոն
Գետառ գետ
0.5
0.4
0.3
0.2
0.1
0.0
2020
2021
Նորմ (2-րդ դաս)
I
II
III
IV
V
VI
VII
IX
X
XI
XII
Ամիսներ

ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Քաղաքներ
- Բնակավայրեր

Մակերևութային ջրերի

- Որակի մոնիթորինգի դիտակետեր
- Հիդրոլոգիական դիտակետեր
- Մտորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



Սևանի ջրավազանային կառավարման տարածք

Հիդրոլոգիական դիտարկումներ

Սևանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 17 դիտակետում, այդ թվում՝ 13 գետային, 4 լճային (Սևանա լիճ) և 1 ջրանցքում: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 4. Սևանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		ապրիլ			մայիս			հունիս		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ձկնագետ	Ծովագյուղ	7.00	4.21	166	2.92	4.25	69	0.41	1.53	27
Մասրիկ	Ծովակ	5.84	5.23	112	5.64	6.26	90	2.33	3.80	61
Մարտունի	Գեղհովիտ	2.78	1.80	155	6.00	4.81	125	2.56	5.46	47
Արգիճի	Վ.Գետաշեն	15.1	14.6	103	11.5	20.8	55	2.90	9.50	31
Գավառագետ	Նորատուս	5.81	4.98	117	3.70	6.55	57	2.90	4.44	65

Մակերևութային ջրերի որակ

Սևանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 18 դիտակետում:

Ձկնագետ գետի ջրի որակը Սեմյոնովկա գյուղից վերև հատվածում մայիս ամսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում ապրիլին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիսին և հունիսին՝ «լավ» (2-րդ դաս):

Մասրիկ գետի ջրի որակը Վերին Շորժա գյուղից վերև մայիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում ապրիլ և մայիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Սոթք գետի ջրի որակը գետաբերանի հատվածում ապրիլ և մայիս ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս):

Կարճաղբյուր գետի ջրի որակը Ախպրաձոր գյուղից վերև հատվածում մայիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝«լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում ապրիլ և մայիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «լավ» (2-րդ դաս):

Վարդենիս գետի ջրի որակը Վարդենիկ գյուղից վերև հատվածում մայիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում ապրիլ և մայիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «լավ» (2-րդ դաս):

Մարտունի գետի ջրի որակը Գեղհովիտ գյուղից վերև հատվածում մայիս և հունիս ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում ապրիլ ամսին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիս և հունիս ամիսներին «միջակ» (4-րդ դաս):

Արգիճի գետի ջրի որակը Լեռնահովիտ գյուղից վերև հատվածում մայիս և հունիս ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում ապրիլ ամսին

ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիս և հունիս ամիսներին՝ «միջակ» (3-րդ դաս):

Ծակքար գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Շողվագ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Գավառագետ գետի ջրի որակը Ծաղկաշեն գյուղից վերև հատվածում մայիս և հունիս ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Արփա-Սևան ջրատարի ջրի որակը Ծովինար գյուղից հարավ-արևելք հատվածում ապրիլ և մայիս ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «լավ» (2-րդ դաս):

Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ազոտի և ֆոսֆորի պարունակությունները.







Սևանա լիճ

2021 թվականի 2-րդ եռամսյակում հիդրոլոգիական դիտարկումներ են իրականացվել Սևանա լճի 4 դիտակետում՝ (Սևանա թերակղզի, Շորժա, Կարճաղբյուր, Մարտունի): Հիդրոօդերևութաբանական տվյալների հիման վրա կազմվել է Սևանա լճի ապրիլ, մայիս և հունիս ամիսների ջրային հաշվեկշիռը:

Աղյուսակ 5. Սևանա լճի ջրային հաշվեկշիռը 2021 թվականի 2-րդ եռամսյակում

Ապրիլ

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2020թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթացքում			
	1	2	3		Նվազ.	միջին	Առավ.
ՄՈՒՏՔ							
Լիճը թափվող գետերով	22.61	51.25	58.42	132.28	42.0	129.7	320.0
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	6.72	14.7	14.73	36.15	1.60	31.7	56.3
Տեղումները լճի մակերևույթի վրա	1.90	16.6	13.1	31.6	19.1	55.8	118.2
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.60	7.80	2.80	5.60	7.90
Ընդամենը	33.83	85.15	88.85	207.83	103.6	215.6	379.3
ԵԼՔ							
Հրազդան գետով	0.00	0.00	0.00	0.00	0.00	7.99	89.0
Գոլորշացում լճի մակերևույթից	15.1	12.6	12.4	40.1	3.40	39.8	106.0
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.40	1.10	1.40
Ընդամենը	15.5	13.0	12.8	41.3	3.80	49.9	121.5
Կուտակում (նվազում)	51.4	38.5	51.3	141.2	0.00	157.7	288.3
Բացարձակ անկապք	-33.07	33.65	24.75	25.33		8.30	
Հարաբերական անկապք %	49.4	39.5	27.9	12.2	0.10	5.00	18.6

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Ամսվա առաջին օրը	1900.63	1279.743	38.3432
Ամսվա վերջին օրը	1900.74	1280.785	38.4844
Միջին ամսական	1900.69	1280.311	38.4202

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում 0.11 (մ)
Մակարդակի փոփոխությունը 01.01.21 30.04.21 ընթացքում 0.22 (մ)
30.04.21 և 30.04.20 մակարդակի տարբերությունը 0.16 (մ)

Մայիս

Ջրային հաշվեկշռի տարրերը	*Ընդամենը (մլն. մ³)*				*Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2020թթ.*		
	Ըստ տասնօրյակների			*Ամսվա ընթաց-քում*			
	1	*2*	*3*		*Նվազ.*	*միջին*	*Առավ.*
ՄՈՒՏՔ							
Լիճը թափվող գետերով	*49.35*	*42.54*	*36.00*	*127.89*	*74.3*	*183.6*	*341.0*
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	*11.94*	*15.13*	*13.88*	*40.95*	*1.70*	*44.4*	*63.8*
Տեղումները լճի մակերևույթի վրա	*40.5*	*0.40*	*18.2*	*59.1*	*33.4*	*71.7*	*131.7*
Ստորերկրյա հոսք	*2.60*	*2.60*	*2.70*	*7.90*	*3.30*	*5.70*	*7.90*
Ընդամենը	*104.39*	*60.67*	*70.78*	*235.84*	*165.3*	*288.5*	*463.4*
ԵԼՔ							
Հրազդան գետով	*0.00*	*0.00*	*8.26*	*8.26*	*0.00*	*12.2*	*94.6*
Գոլորշացում լճի մակերևույթից	*21.4*	*20.2*	*33.4*	*75.0*	*23.0*	*52.6*	*82.2*
Ստորերկրյա հոսք	*0.40*	*0.40*	*0.40*	*1.20*	*0.50*	*1.10*	*1.70*
Ընդամենը	*21.80*	*20.60*	*42.06*	*84.46*	*24.0*	*67.1*	*144.8*
Կուտակում (նվազում)	*77.0*	*64.2*	*51.3*	*192.5*	*25.8*	*221.3*	*454.6*
Բացարձակ անկապք	*5.59*	*-24.13*	*-22.58*	*-41.12*		*1.30*	
Հարաբերական անկապք %	*5.35*	*28.5*	*24.2*	*14.8*	*0.10*	*4.60*	*22.9*

Բնութագրեր	*Լճի մակարդակը, մ*	*Լճի մակերեսը, կմ²*	*Լճի ծավալը, կմ³*
Ամսվա առաջին օրը	*1900.75*	*1280.879*	*38.4973*
Ամսվա վերջին օրը	*1900.90*	*1282.299*	*38.6898*
Միջին ամսական	*1900.84*	*1281.731*	*38.6128*

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում *0.15 (մ)*
Մակարդակի փոփոխությունը 01.01.21 31.05.21 ընթացքում *0.38 (մ)*
31.05.21 և 31.05.20 մակարդակի տարբերությունը *0.13 (մ)*

Հունիս

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2020թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթաց-քում			
	1	2	3		Նվազ.	միջին	Առավ.
ՄՈՒՏՔ							
Լիճը թափվող գետերով	22.73	15.89	10.07	48.69	36.6	110.4	225.0
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	7.22	4.34	3.43	14.99	0.00	35.2	55.7
Տեղումները լճի մակերևույթի վրա	3.30	0.50	1.00	4.80	20.4	73.1	136.0
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.60	7.80	3.00	5.70	7.80
Ընդամենը	35.85	23.33	17.10	76.28	101.5	209.5	355.7
ԵԼՔ							
Հրազդան գետով	21.70	27.02	18.56	67.28	0.18	45.8	120.9
Գոլորշացում լճի մակերևույթից	48.4	50.5	54.8	153.7	36.9	89.3	131.3
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.40	1.10	1.70
Ընդամենը	70.50	77.92	73.76	222.18	65.6	136.5	222.5
Դուտակում (նվազում)	-12.8	-64.2	-51.4	-128.4	-62.80	77.8	240.7
Բացարձակ անկապք	-21.85	9.61	-5.26	-17.50		-4.50	
Հարաբերական անկապք %	31.0	11.0	7.13	7.88	0.40	4.70	30.0

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ2	Լճի ծավալը, կմ3
Ամսվա առաջին օրը	1900.90	1282.299	38.6898
Ամսվա վերջին օրը	1900.80	1281.353	38.5614
Միջին ամսական	1900.86	1281.921	38.6385

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում -0.10 (մ)
Մակարդակի փոփոխությունը 01.01.21 30.06.21 ընթացքում 0.28 (մ)
30.06.21 և 30.06.20 մակարդակի տարբերությունը -0.04 (մ)

2021 թվականի ապրիլի 1-ին լճի մակարդակը կազմել է 1900.63մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատությամբ բարձր է եղել 18սմ-ով: 2021 թվականի ապրիլի 30-ին լճի մակարդակը կազմել է 1900.74մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատ բարձր է եղել 16սմ-ով, մայիսի 31-ին՝ 1900.90մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատ բարձր է եղել 13սմ-ով, իսկ հունիսի 30-ին կազմել է 1900.80մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատությամբ ցածր է եղել 4սմ-ով: 2021 թվականի ապրիլի 1-ից մինչև հունիսի 30-ը լճի մակարդակը բարձրացել է 17 սմ-ով:

Արփա-Սևան ջրատարով լիճ մուտք գործած ջրի ծավալը ապրիլ ամսին կազմել է 36.148 մլն մ³, մայիսին՝ 40.951 մլն մ³, հունիսին՝ 14.987 մլն մ³:

2021 թվականի ապրիլի 1-ին Սևանա լճի մակերեսը կազմել է 1279.743 կմ^2, ծավալը 38.3432 կմ^3, իսկ եռամսյակի վերջին օրը՝ հունիսի 30-ին համապատասխանաբար՝ 1281.353 կմ^2 և 38.5614 կմ^3:

2021 թվականի ապրիլի 1-ին Մեծ Սևանի ծավալը կազմել է 24.2108կմ^3, Փոքր Սևանինը 14.1324կմ^3, իսկ հունսի 30-ին համապատասխանաբար՝ 24.3712կմ^3 և 14.1903կմ^3:

Սևանա լճից ոռոգման նպատակով ջրի բաց թողումը սկսվել է մայիսի 25-ին: Մայիսին բաց թողնված ջրի ծավալը կազմել է՝ 8.275 մլն մ^3, հունիսին՝ 67.349 մլն մ^3:

Սևանա լճի ջրի որակի ուսումնասիրության նպատակով ջրի որակի նմուշառումն իրականացվել է Փոքր և Մեծ Սևանների տարբեր խորություններից: Սևանա լճից վերցված փորձանմուշներում, ձկնատնտեսական նորմերի գնահատման համաձայն, երեք ամիսների ընթացքում ՍԹԿ-ն գերազանցել են թթվածնի քիմիական պահանջարկի, թթվածնի հնգօրյա կենսաբանական պահանջարկի, ամոնիում իոնի, ցինկի, պղնձի, քրոմի, վանադիումի և սելենի կոնցենտրացիաները: Որոշված մյուս ցուցանիշների պարունակությունները չեն գերազանցել ՍԹԿ-ները (*Աղյուսակ 11*):

Սևանա լճում կենսածին նյութերի պարունակությունները.






Կոնց. (մգN/լ)
Նիտրատ իոն
Մեծ Սևան
0.16
0.14
0.12
0.10
0.08
0.06
0.04
0.02
0.00
0.5
5
10
20
25
32
Ապրիլ
Մայիս
Հունիս
Խորություն, մ


Կոնց. (մգN/լ)
Նիտրատ իոն
Փոքր Սևան
0.16
0.14
0.12
0.10
0.08
0.06
0.04
0.02
0.00
0.5
5
10
20
30
55
70
78
Ապրիլ
Մայիս
Հունիս
Խորություն, մ


Կոնց. (մգ/լ)
Ֆոսֆատ իոն
Մեծ Սևան
0.30
0.25
0.20
0.15
0.10
0.05
0.00
0.5
5
10
20
25
32
Ապրիլ
Մայիս
Հունիս
Խորություն, մ


Կոնց. (մգ/լ)
Ֆոսֆատ իոն
Փոքր Սևան
0.30
0.25
0.20
0.15
0.10
0.05
0.00
0.5
5
10
20
30
55
70
78
Ապրիլ
Մայիս
Հունիս
Խորություն , մ

Աղյուսակ 6. Սևանա լճի ջրի որակի մոնիթորինգի արդյունքները 2021 թվականի 2-րդ եռամսյակում

Ապրիլ

Դիտակետի համար	*Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)*				
	Թթվածնի քիմիական պահանջ, ՍԹԿ=30 մգ/լ	*Պղինձ, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Քրոմ, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Վանադիում, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Սելէն, ՍԹԿ=0,001 մգ/լ*
Մեծ Սևան, 0.5մ խորություն	_	*1.6*	*1.7*	*4.8*	*3.0*
Մեծ Սևան, 10մ խորություն	_	*1.7*	*1.3*	*4.8*	*3.1*
Մեծ Սևան, 20մ խորություն	_	*1.3*	_	*4.7*	*3.2*
Մեծ Սևան, 25մ խորություն	_	*1.3*	*2.0*	*4.3*	*2.5*
Մեծ Սևան, 30մ խորություն	_	*1.4*	*2.0*	*4.3*	*2.3*
Մեծ Սևան, 5մ խորություն	_	*2.5*	_	*4.8*	*3.3*
Փոքր Սևան, 0.5մ խորություն	_	*1.3*	*1.8*	*4.5*	*3.2*
Փոքր Սևան, 10մ խորություն	_	*1.3*	*1.2*	*4.7*	*2.6*
Փոքր Սևան, 20մ խորություն	*1.5*	*1.6*	_	*4.5*	*2.6*
Փոքր Սևան, 30մ խորություն	_	*1.4*	*2.2*	*4.4*	*2.6*
Փոքր Սևան, 5մ խորություն	_	*1.4*	*2.2*	*4.5*	*2.6*
Փոքր Սևան, 55մ խորություն	_	*1.8*	_	*4.6*	*3.0*
Փոքր Սևան, 70մ խորություն	_	*1.5*	*2.3*	*4.4*	*3.0*
Փոքր Սևան, 80մ խորություն	*1.2*	*2.5*	*2.1*	*4.7*	*2.6*

Մայիս

Դիտակետի համար	*Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)*							
	Թթվածնի 5-օրյա կենսաքիմիական պահանջարկ, ՍԹԿ=3	*Թթվածնի քիմիական պահանջ, ՍԹԿ=30 մգ/լ*	*Ամոնիում իոն, ՍԹԿ=0,39 մգN/լ*	*Ցինկ, ՍԹԿ=0,01 մգ/լ*	*Պղինձ, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Քրոմ, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Կադմիում, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Սկուա, ՍԹԿ=0,001 մգ/լ*
Փոքր Սևան, 0.5մ խորություն	_	_	*1.3*	_	_	*6.1*	*5.0*	*6.9*
Փոքր Սևան, 5մ խորություն	_	_	*1.3*	_	_	*6.2*	*4.9*	*6.6*
Փոքր Սևան, 10մ խորություն	_	_	*1.3*	_	_	*5.4*	*5.0*	*7.3*
Փոքր Սևան, 20մ խորություն	_	*1.2*	_	_	_	*6.4*	*4.9*	*6.7*
Փոքր Սևան, 30մ խորություն	_	_	*1.2*	_	_	*4.4*	*4.9*	*6.9*
Փոքր Սևան, 55մ խորություն	_	*1.2*	*1.2*	_	_	*3.8*	*4.8*	*4.4*
Փոքր Սևան, 70մ խորություն	_	_	*1.6*	_	_	*2.8*	*4.7*	*3.9*
Փոքր Սևան, 80մ խորություն	_	_	*1.5*	_	_	*3.4*	*4.7*	*3.9*
Մեծ Սևան, 0.5մ խորություն	_	*1.5*	*1.5*	*1.4*	*1.8*	*2.9*	*4.9*	*3.0*
Մեծ Սևան, 5մ խորություն	_	_	*1.5*	_	_	*2.0*	*4.8*	*2.2*
Մեծ Սևան, 10մ խորություն	_	_	*1.4*	_	_	*2.3*	*4.7*	*3.4*
Մեծ Սևան, 20մ խորություն	_	_	*1.4*	_	_	_	*4.5*	_
Մեծ Սևան, 25մ խորություն	_	_	*1.3*	_	_	_	*4.6*	*1.5*
Մեծ Սևան, 30մ խորություն	_	*1.2*	*1.3*	_	*1.5*	_	*4.6*	_

Հունիս

Դիտակետի համար, տեղադիրք (խորություն)	*Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)*						
	Թթվածնի 5-օրյա կենսաքիմիական պահանջարկ, ՍԹԿ=3	*Թթվածնի քիմիական պահանջ, ՍԹԿ=30*	*Ամոնիում իոն, ՍԹԿ=0,39 մգN/լ*	*Պղինձ, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Քրոմ, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Վանադիում, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Սելեն, ՍԹԿ=0,001 մգ/լ*
115-ՄՍ, Ծափաթաղ-ափամերձ (մակերևույթից)	–	–	–	–	*1.9*	*5.1*	*2.6*
115-ՄՍ, Ծափաթաղ-ափամերձ (7մ խորությունից)	–	–	–	–	*1.9*	*5.2*	*2.7*
115´-ՄՍ, Ծափաթաղ-կենտրոնական (մակերևույթից)	–	*1.2*	–	–	*2.3*	*5.2*	*6.5*
115´-ՄՍ, Ծափաթաղ-կենտրոնական (7մ խորությունից)	–	*1.2*	–	–	*2.0*	*5.2*	*3.3*
115´-ՄՍ, Ծափաթաղ-կենտրոնական (30մ խորությունից)	–	*1.3*	–	–	*2.1*	*5.4*	*4.5*
118-ՄՍ, Գիլի-ափամերձ (մակերևույթից)	–	–	–	*1.5*	*2.2*	*5.6*	*4.0*
118-ՄՍ, Գիլի-ափամերձ (7մ խորությունից)	*1.2*	*1.3*	*1.2*	–	*2.0*	*5.8*	*4.2*
118´-ՄՍ, Գիլի-կենտրոնական (մակերևույթից)	*1.3*	*1.2*	–	–	*2.2*	*5.6*	*4.1*
118´-ՄՍ, Գիլի-կենտրոնական (7մ խորությունից)	*1.3*	*1.3*	–	–	*2.0*	*5.7*	*4.2*
118´-ՄՍ, Գիլի-կենտրոնական (20մ խորությունից)	–	–	*1.2*	–	*1.9*	*5.5*	*3.9*
119-ՄՍ, Արփա-ափամերձ (մակերևույթից)	–	*1.2*	–	–	*1.4*	*4.8*	–
119-ՄՍ, Արփա-ափամերձ (7մ խորությունից)	–	–	–	–	*1.5*	*5.2*	*4.4*
119´-ՄՍ, Արփա-կենտրոնական (մակերևույթից)	–	–	*1.2*	–	*1.6*	*5.0*	*3.8*
119´-ՄՍ, Արփա-կենտրոնական (7մ խորությունից)	–	*1.2*	–	–	*1.6*	*5.1*	*3.5*
119´-ՄՍ, Արփա-կենտրոնական (30մ խորությունից)	–	*2.5*	–	–	*1.4*	*5.1*	–
124-ՄՍ, Նորատուս-ափամերձ (մակերևույթից)	–	*1.2*	*1.4*	–	*2.4*	*5.3*	*9.5*
124-ՄՍ, Նորատուս-ափամերձ (7մ խորությունից)	–	*1.8*	–	–	*2.7*	*5.1*	*8.0*

Դիտակետի համար, տեղադիրք (խորություն)	Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)						
	Թթվածնի 5-օրյա կենսաքիմիական պահանջարկ, ՍԹԿ=3	Թթվածնի քիմիական պահանջ, ՍԹԿ=30	Ամոնիում իոն, ՍԹԿ=0,39 մգN/լ	Պղինձ, ՍԹԿ=0,001 մգ/լ	Քրոմ, ՍԹԿ=0,001 մգ/լ	Վանադիում, ՍԹԿ=0,001 մգ/լ	Սելեն, ՍԹԿ=0,001 մգ/լ
124´-ՄՍ, Նորատուս-կենտրոնական (7մ խորությունից)	_	1.3	_	_	1.9	5.3	6.7
124´-ՄՍ, Նորատուս-կենտրոնական (30մ խորությունից)	_	1.5	_	_	1.8	5.5	7.7
126-ՓՍ, Այրիվանք-ափամերձ (մակերևույթից)	_	1.5	_	_	2.3	5.2	5.8
126-ՓՍ, Այրիվանք-ափամերձ (7մ խորությունից)	_	1.3	_	_	2.9	5.2	5.1
126'-ՓՍ, Այրիվանք-կենտրոնական (մակերևույթից)	_	1.5	1.3	1.4	2.6	5.1	5.3
126'-ՓՍ, Այրիվանք-կենտրոնական (7մ խորությունից)	_	1.7	_	_	2.2	5.0	4.5
126'-ՓՍ, Այրիվանք-կենտրոնական (30մ խորությունից)	_	1.8	_	_	3.0	5.0	6.1
127-ՓՍ, Մողևլայնին-ափամերձ (մակերևույթից)	_	_	_	_	2.1	4.9	_
127-ՓՍ, Մողևլայնին-ափամերձ (7մ խորությունից)	_	1.2	_	_	2.6	5.0	_
127'-ՓՍ, Մողևլային-կենտրոնական (մակերևույթից)	_	1.5	_	_	1.8	5.0	5.8
127´-ՓՍ, Մողևլային-կենտրոնական (30մ խորությունից)	_	1.2	_	_	2.2	4.6	1.7
130-ՓՍ, Գյունեյ-ափամերձ (մակերևույթից)	_	1.2	_	_	2.1	4.8	5.5
130-ՓՍ, Գյունեյ-ափամերձ (7մ խորությունից)	_	1.5	_	_	2.4	4.9	6.8
130'-ՓՍ, Գյունեյ-կենտրոնական (մակերևույթից)	_	1.3	_	_	1.3	4.9	6.9
130'-ՓՍ, Գյունեյ-կենտրոնական (7մ խորությունից)	_	1.2	_	_	2.1	4.9	4.7
131-ՓՍ, Շորժա-ափամերձ (մակերևույթից)	1.2	1.5	1.2	_	2.3	4.9	5.8
131-ՓՍ, Շորժա-ափամերձ (7մ խորությունից)	_	1.2	1.2	_	1.9	4.8	4.9

Դիտակետի համար, տեղադիրք (խորություն)	Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)						
	Թթվածնի 5-օրյա կենսաքիմիական պահանջարկ, ՍԹԿ=3	Թթվածնի քիմիական պահանջ, ՍԹԿ=30	Ամոնիում իոն, ՍԹԿ=0,39 մգN/լ	Ցինկ, ՍԹԿ=0,001 մգ/լ	Քրոմ, ՍԹԿ=0,001 մգ/լ	Վանադիում, ՍԹԿ=0,001 մգ/լ	Սելեն, ՍԹԿ=0,001 մգ/լ
131'-ՓՍ, Շորժա-կենտրոնական (մակերևույթից)	1.2	1.5	_	_	2.3	5.0	7.7
131'-ՓՍ, Շորժա-կենտրոնական (7մ խորությունից)	_	1.5	_	_	2.5	4.9	4.7
131'-ՓՍ, Շորժա-կենտրոնական (30մ խորությունից)	_	1.5	_	_	2.3	4.7	3.4
Մեծ Սևան, 0.5մ խորություն	_	_	1.3	_	2.3	4.8	4.9
Մեծ Սևան, 5մ խորություն	_	_	1.3	_	2.9	5.0	5.2
Մեծ Սևան, 10մ խորություն	_	_	_	_	2.0	4.8	5.4
Մեծ Սևան, 20մ խորություն	_	_	_	_	2.3	5.0	6.0
Մեծ Սևան, 30մ խորություն	_	_	_	_	2.5	5.1	6.5
Փոքր Սևան, 0.5մ խորություն	_	_	_	_	2.5	4.8	5.7
Փոքր Սևան, 5մ խորություն	_	_	_	_	2.4	5.0	4.4
Փոքր Սևան, 10մ խորություն	_	_	_	_	1.5	4.7	5.3
Փոքր Սևան, 20մ խորություն	_	_	1.2	_	1.8	4.8	4.8
Փոքր Սևան, 30մ խորություն	_	_	_	_	2.2	4.9	2.2
Փոքր Սևան, 55մ խորություն	_	_	1.2	_	2.4	5.0	3.9
Փոքր Սևան, 70մ խորություն	_	_	1.4	_	2.7	5.0	2.9
Փոքր Սևան, 80մ խորություն	_	_	1.3	_	2.1	5.0	3.6

ՀՀ Սևանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը







ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտակետեր
- Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Սևանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս

Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Հիդրոլոգիական դիտարկումներ

Արարատյան ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 12 դիտակետում, այդ թվում՝ 11 գետային և 1 ջրամբարային (Ազատի ջրամբար): Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 7. Արարատյան ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		ապրիլ			մայիս			հունիս		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ազատ	Գառնի	9.17	7.70	119	7.33	12.3	59	1.35	9.29	15
Վեդի	Ուրցաձոր	6.79	4.50	151	4.45	6.84	65	0.28	2.16	13
Արփա	Ջերմուկ	5.00	6.26	80	7.43	18.7	40	3.12	11.4	27
Արփա	Արենի	40.9	30.5	134	39.1	50.6	77	4.84	25.7	19

Մակերևութային ջրերի որակ

Արարատյան ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 13 դիտակետում:

Վեդի գետի ջրի որակը Ուրցաձոր գյուղից վերև հատվածում մայիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «լավ» (2-րդ դաս): Արարատ քաղաքից ներքև հատվածում ջրի որակը ապրիլին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիսին՝ «վատ» (5-րդ դաս):

Արփա գետի ջրի որակը Ջերմուկ քաղաքից վերև ապրիլ և մայիս ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «լավ» (2-րդ դաս): Վայք քաղաքից վերև հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վայք քաղաքից ներքև հատվածում ապրիլ և մայիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Եղեգնաձոր քաղաքից վերև հատվածում ապրիլ և մայիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «վատ» (5-րդ դաս): Արենի գյուղից ներքև հատվածում ապրիլ և մայիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Դարբ գետի ջրի որակը ակունքում ապրիլ և մայիս ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Հերհեր գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հունիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Եղեգիս գետի ջրի որակը Գետիկվանք գյուղից վերև հատվածում հունիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Շատին գյուղից ներքև հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

ՀՀ Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը







ՊԱՅՄԱՆԱԳԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Քաղաքներ
- Բնակավայրեր

Մակերևութային ջրերի

- Որակի մոնիթորինգի դիտակետեր
- Հիդրոլոգիական դիտակետեր
- Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Հիդրոլոգիական դիտարկումներ

Հարավային ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 9 դիտակետում: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացվում են.

Աղյուսակ 8. Հարավային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		ապրիլ			մայիս			հունիս		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Մեղրիգետ	Մեղրի	10.4	5.70	183	15.3	7.70	199	8.49	8.47	100
Ողջի	Կապան	27.8	11.1	250	36.6	21.6	168	12.9	18.7	69
Որոտան	Գորայք	12.6	4.60	275	24.5	12.3	199	3.06	8.55	36

Մակերևութային ջրերի որակ

Հարավային ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 21 դիտակետում:

Կարճևան գետի ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մեղրիգետ գետի ջրի որակը Մեղրի քաղաքից վերև հատվածում մայիս և հունիս ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Գետաբերանի հատվածում ապրիլ և հունիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիսին՝ «միջակ» (3-րդ դաս):

Ողջի գետի ջրի որակը Քաջարան քաղաքից վերև հատվածում մայիս և հունիս ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Քաջարան քաղաքից ներքև հատվածում ապրիլին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մայիս և հունիս ամիսներին՝ «անբավարար» (4-րդ դաս): Կապան քաղաքից վերև հատվածում ապրիլ և հունիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Կապանի օդանավակայանից ներքև հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Աճանան (Նորաշենիկ) գետի ջրի որակը Աճանան գյուղից վերև հատվածում ապրիլ և հունիս ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Գետաբերանի հատվածում գետի ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Որոտան գետի ջրի որակը Գորայք գյուղից վերև հատվածում ապրիլին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիսին՝ «լավ» (2-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս): Սիսիան քաղաքից վերև գետի ջրի որակը մայիսին և հունիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Սիսիան քաղաքից ներքև ապրիլին գետի ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մայիսին և հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս): Տաթև ՀԷԿ-ից ներքև հատվածում գետի ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Սիսիան գետի ջրի որակը Արևիս գյուղից վերև հատվածում մայիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում գետի ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Վարարակ գետի ջրի որակը Գորիս քաղաքից վերև ապրիլ և մայիս ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Գետաբերանի

հատվածում գետի ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Որոտան-Արփա ջրատարի ջրի որակը թունելի ելքից հատվածում ապրիլ և հունիս ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիսին՝ «միջակ» (3-րդ դաս):

ՀՀ Հարավային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը







ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Բնակավայրեր

Մակերևութային ջրերի

- Որակի մոնիթորինգի դիտակետեր
- Հիդրոլոգիական դիտակետեր
- Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս

Ջրամբարներ

Ախուրյանի, Արփի լիճ, Ազատի և Ապարանի ջրամբարներում իրականացվում են հիդրոլոգիական դիտարկումներ և ջրի որակի մոնիթորինգ, Մարմարիկի ջրամբարում իրականացվում են միայն հիդրոլոգիական դիտարկումներ, իսկ Կեչուտի ջրամբարում և Երևանյան լճում՝ միայն ջրի որակի մոնիթորինգ:

2021թվականի 2-րդ եռամսյակում ջրամբարների լցվածությունների մեծությունները եռամսյակի ամիսների վերջին օրերի դրությամբ ներկայացված են հաջորդող աղյուսակում.

Աղյուսակ 9. Ջրամբարների ջրալցվածությունը.

Ջրամբարի անվանումը	Ջրամբարի ընդհանուր ծավալը. մլն.խոր.մ	Փաստացի լցվածությունը, ապրիլի 30-ի դրությամբ		Փաստացի լցվածությունը, մայիսի 31-ի դրությամբ		Փաստացի լցվածությունը, հունիսի 30-ի դրությամբ	
		ընդամենը մլն.խոր.մ	ընդհանուր ծավալի նկատմամբ %	ընդամենը մլն.խոր.մ	ընդհանուր ծավալի նկատմամբ %	ընդամենը մլն.խոր.մ	ընդհանուր ծավալի նկատմամբ %
Ախուրյան	525	275.53	52	221.49	42	140.44	27
Արփի լիճ	105	54.10	52	68.30	65	60.90	58
Ազատ	70	56.38	81	59.81	85	40.48	58
Ապարան	91	41.55	46	38.16	42	31.30	34
Մարմարիկ	24	16.59	69	15.01	63	8.52	36

Ջրամբարների ջրի որակ

Արփի լիճ ջրամբարի ջրի որակը մայիսին գնահատվել է՝ «միջակ» (3-րդ դաս), Ախուրյանի ջրամբարի ջրի որակը ապրիլ և մայիս ամիսներին գնահատվել է՝ «միջակ» (3-րդ դաս), Ապարանի ջրամբարի ջրի որակը մայիս և հունիս ամիսներին գնահատվել է՝ «լավ» (2-րդ դաս), Երևանյան լիճ ջրամբարի ջրի որակը մայիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Ազատի ջրամբարի ջրի որակը մայիսին գնահատվել է՝ «լավ» (2-րդ դաս), Կեչուտի ջրամբարի ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «լավ» (2-րդ դաս):





Աղյուսակ 10. Ջրամբարների ջրի որակը 2021թ. 2-րդ եռամսյակում.

Ապրիլ

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Ախուրյանի ջրամբար (110)	ամբարտակի մոտ	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
Կեչուտի ջրամբար (114)	ամբարտակի մոտ	-	2-րդ	2-րդ

Մայիս

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Արփի լճի ջրամբար (109)	ամբարտակի մոտ	ԹՔՊ, ԿՆ	3-րդ	3-րդ
Ախուրյանի ջրամբար (110)	ամբարտակի մոտ	ԹՔՊ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
Ապարանի ջրամբար (111)	ամբարտակի մոտ	-	2-րդ	2-րդ
Երևանյան լիճ (112)	ամբարտակի մոտ	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
		Նիտրիտ իոն	4-րդ	
Ազատի ջրամբար (113)	ամբարտակի մոտ	-	2-րդ	2-րդ
Կեչուտի ջրամբար (114)	ամբարտակի մոտ	-	2-րդ	2-րդ

Հունիս

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Ապարանի ջրամբար (111)	ամբարտակի մոտ	-	2-րդ	2-րդ
Կեչուտի ջրամբար (114)	ամբարտակի մոտ	-	2-րդ	2-րդ

Արաքս գետ

2021 թվականի 2-րդ եռամսյակում դիտարկումներ են իրականացվել Արաքս գետի 7 դիտակետում: Գետի ջրի փորձանմուշներում որոշված ցուցանիշներից, ակնատեսական ՍԹԿ-ներով գնահատման համաձայն, դիտվում է պղնձով բարձր աղտոտվածություն: Որոշված մյուս ցուցանիշներից գերազանցվել են ԹՔՊ-ի, ամոնիում, նիտրիտ և սուլֆատ իոնների, ցինկի, քրոմի, նիկելի, մանգանի, վանադիումի, երկաթի, ալյումինի և սելենի համապատասխան ՍԹԿ-ները: Արաքս գետի աղտոտվածության գերազանցումների վերաբերյալ մանրամասն տեղեկություն ըստ առանձին ամիսների բերված է աղյուսակ 16-ում):



Աղյուսակ 11. Արաքս գետի ջրի որակի մոնիթորինգի գնահատման արդյունքները 2021 թվականի 2-րդ եռամսյակում

Ապրիլ

Դիտակետի համար (խորություն, մ)	*Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)*									
	Թթվածնի քիմիական պահանջ, ՍԹԿ=30 մգ/լ	*Ամոնիում իոն, ՍԹԿ=0,39 մգN/լ*	*Նիտրիտ իոն, ՍԹԿ=0,024 մգN/լ*	*Ցինկ, ՍԹԿ=0,01 մգ/լ*	*Պղինձ, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Քրոմ, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Մանգան, ՍԹԿ=0,01 մգ/լ*	*Վանադիում, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Կյանմին, ՍԹԿ=0,04 մգ/լ*	*Սելեն, ՍԹԿ=0,001 մգ/լ*
Հուշակերտ գյուղից 0.9 կմ ներքև (25)	_	*1.8*	_	_	*7.5*	*7.6*	*10.3*	*8.1*	*29.8*	_
Ագարակ քաղաքից 2 կմ հարավ ((29) AMS-1)	*1.2*	_	*2.5*	*1.7*	*42.0*	*16.4*	*15.3*	*25.6*	*85.3*	*3.1*
Ագարակ քաղաքից 2.5 կմ ք. հարավ-արևելք ((30) AMS-2)	*1.8*	_	*2.7*	_	*611.0*	*9.6*	*10.3*	*21.5*	*55.1*	*3.1*
Մեղրիգետի թափման կետից վերև (AMS-3)	_	_	*2.5*	*1.3*	*37.2*	*9.1*	*10.0*	*21.4*	*50.5*	*2.7*

Մայիս

Դիտակետի համար (խորություն, մ)	Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)												
	Թթվածնի քիմիական պահանջ, ՍԹԿ=30 մգ/լ	Ամոնիում իոն, ՍԹԿ=0,39 մգN/լ	Նիտրիտ իոն, ՍԹԿ=0,024 մգN/լ	Սուլֆատ իոն, ՍԹԿ=100 մգ/լ	Ցինկ, ՍԹԿ=0,01 մգ/լ	Պղինձ, ՍԹԿ=0,001 մգ/լ	Քրոմ, ՍԹԿ=0,001 մգ/լ	Նիկել, ՍԹԿ=0,01 մգ/լ	Մանգան, ՍԹԿ=0,01 մգ/լ	Կադմիում, ՍԹԿ=0,001 մգ/լ	Երկաթ, ՍԹԿ=0,5 մգ/լ	Ալյումին, ՍԹԿ=0,04 մգ/լ	Սելեն, ՍԹԿ=0,001 մգ/լ
Հուշակերտ գյուղից 0.9 կմ ներքև (25)	1.3	_	1.6	_	_	8.5	9.0	3.1	16.0	10.2	3.0	33.9	_
Հրազդան գետի թափման կետից վերև (26)	_	3.6	4.4	1.3	_	5.8	5.9	1.9	9.1	15.2	2.0	19.7	2.9
Հրազդան գետի թափման կետից ներքև (27)	_	2.6	5.1	_	1.2	6.2	6.8	2.1	9.2	14.2	2.2	22.9	2.4
Արարատից քաղաքից 0.5 կմ ներքև (28)	_	_	6.6	_	_	6.3	12.5	1.8	10.1	14.7	2.0	22.5	1.9
Ազարակ քաղաքից 2 կմ հարավ ((29) AMS-1)	_	_	1.3	1.9	2.2	7.4	4.7	_	4.8	11.4	_	7.8	_
Ազարակ քաղաքից 2.5 կմ ք. հարավ-արևելք ((30) AMS-2)	1.5	1.4	1.5	1.8	_	7.1	4.8	_	5.6	12.3	_	10.3	_
Մեղրիգետի թափման կետից վերև (AMS-3)	1.2	1.6	1.5	1.9	2.8	181.8	5.4	_	28.9	25.2	14.2	63.5	_

Հունիս

Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	*Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)*									
	Նիտրիտ իոն, ՍԹԿ=0,024 մգN/լ	*Սուլֆատ իոն, ՍԹԿ=100 մգ/լ*	*Ղղինձ, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Քրոմ, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Նիկել, ՍԹԿ=0,01 մգ/լ*	*Մանգան, ՍԹԿ=0,01 մգ/լ*	*Վանադիում, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Երկաթ, ՍԹԿ=0,5 մգ/լ*	*Ալյումին, ՍԹԿ=0,04 մգ/լ*	*Սելեն, ՍԹԿ=0,001 մգ/լ*
Ագարակ քաղաքից 2 կմ հարավ ((29) AMS-1)	*1.8*	*2.0*	*7.3*	*9.1*	*2.1*	*15.0*	*18.1*	*4.3*	*37.8*	*4.2*
Ագարակ քաղաքից 2.5 կմ հարավ-արևելք ((30) AMS-2)	*1.8*	*2.0*	*18.2*	*9.3*	*2.0*	*16.7*	*20.2*	*5.5*	*41.3*	*4.6*
Մեղրիգետի թափման կետից վերև (AMS-3)	*1.6*	*2.0*	*9.1*	*9.8*	*1.8*	*19.9*	*17.5*	*6.4*	*40.9*	*3.4*